

**ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՕՐՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ
ՎԱՉԵ ՍԵՄԵՐՈՅԱՆԻՆ՝ ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՈՒ
ՆԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
40-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

**ԳԻՐ ՆԱՅԻՐԱԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՅԵԱՆ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՏ ԶԱԲԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾԻՆ,
ՏԻԱՐ ՎԱՉԷ ՍԵՄԵՐՈՅԱՆ,
ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՋԵԼԷՍ, ԱՄՆ**

ԱՄՆ հայոց արեւմտեան թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանից գոհունակ սրտով տեղեկացանք, որ այս տարի Մայիսի 19 - ին թեմեան Մշակութային Միութեան Լոս Անջելէսի մասնաճիւղի նախաձեռնութեամբ, որի Կենտրոնական Վարչութեան երկարամեայ անդամն էք, նշուելու է Ձեր լրագրողական եւ հասարակական գործունէութեան 40 - ամեակը, եւ յընթացս հանդիսութեան պիտի կայանայ նաեւ «Ապրումն սփիւռք» խորագրով Ձեր նոր հրատարակած գրքի շնորհանդէսը:

Մեծարգոյ պրն Մեմերճեան. անկեղծ ուրախութեամբ ենք անդրադառնում, որ Ձեր արդիւնաշատ կեանքն ու գործունէութիւնը իմաստաւորել եւ իմաստաւորում էք մեր ազգին, Նայրենիքին ու Եկեղեցուն մասնացած մեծարժէք ծառայութիւններով: Դուք, իբրեւ հաւաքատուր հարազատ զաւակ Նայ Առաքելական Եկեղեցու, լրագրող եւ հասարակական գործիչ, Ձեր գործուն մասնակցութիւնն էք բերում ԱՄՆ հայոց արեւմտեան թեմի համայնքային կեանքին եւ հայոց լեզուի ու պարմութեան ուսուցչի շնորհակալ առաքելութեամբ՝ հայրենասիրութեան ու եկեղեցասիրութեան Ձեր ոգին էք փոխանցում Արշակ Տիգրանեան վարժարանի ժրաջան սանուց, խանդավառելով նրանց մեր ազգի ու Եկեղեցու փառապանծ անցեալով ու ապագայի կենդանի տեսիլքով, նուիրական մեր հերոսների ոգեղէն կեանքով ու սրբազան գործերով:

Անխոնջ մշակ հայ գրչի, բառ ու բանի.

Ձեր յոբելեանի առիթով Ամենայն Նայոց հաւաքի օրրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ Մեր սրտաբոխ շնորհատրանքներն ու Նայրապելական օրհնութիւնը: Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարեմաղթանքն է, որ Ամենա-

խնամն Աստուած Իր Աջի հովանու ներքոյ շաջառողջ երկար կեանք ու ամենայն բարիք պարգևի Ձեզ, որպէսզի շարունակէք սպեղծագործական նորանոր ներշնչանքներով Ձեր նպաստը բերել հայ դպրութեանն ու մշակոյթին՝ փառաց պսակ հիւսելով Ձեզ կեանք պարգեւած փրախնամ մեր ժողովրդին:

Ողջ լերութ ի Տէր, գորացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւեր օրինեալ ի Մենջ. ամեն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳՐԵ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա Օրհնութեան Գիրս
ի 18-ն Մայիսի ի թուին Տեառն 2000
եւ ի թուին հայոց ՌՆՆՏԹ-
ի Մայրաքաղաք Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ 38